

ԶԱՐԹԻՐ Ի ԼԱՕ,
ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԸ ԳՈՂՆԱՆ՝
ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԷՆ

Այս յօդուածը կը մտադրեմ գոնէ 10 հայ թերթերու ղրկել, բայց անոնց մէկ մասը ՀԲԸՄ-ին երախտապարտ ըլլալով, պիտի չհամարձակին հրատարակել զայն, քանի «թելադրութիւնը» ստացած են միայն ՀԲԸՄ-ի կողմնակից կարծիքներ հրատարակել՝ Մելգոնեան Կրթական Հաստատութեան (ՄԿՀ) ամօթալի փակման մասին: Այս արդէն գարշահոտութիւն պիտի պատճառէր՝ ազատ խօսքի ու մարդկային հիմնական իրաւունքներու սիրահարներուն:

Երկրորդ գարշահոտութիւն մը պէտք է զգանք հայերս՝ մեր կարգ մը բարձր բարեգործական եւ կուսակցական մարմիններու, ժամանակավրէպ սահմանադրութիւններով ու նաեւ սակաւատիրական ամենադժուարներով: ՀԲԸՄ-ի քանի՞ անդամներ օրինակ, կրնան անկեղծօրէն ըսել թէ առիթը ունեցած են այդ բարձրագոյն, հարուստ եւ ինքզինք «ժողովրդական» նկատող Բարեգործական մարմին, սահմանադրութիւնը երբէկ կարդալու: Որպէս բացայայտօրէն սակաւատիրական մարմին, ան քանի՞ անգամ իր անդամներուն քուէն խնդրած է, կարելոր ազգային որոշման մը յանգելէ առաջ: Ու ՄԿՀ-եան փակման որոշումը՝ չեմ կարծեր թէ միակ հայն եմ որ ազգային կարելոր որոշում մը կը նկատէ:

Կարելոր որոշում մըն է ան՝ որովհետեւ մեր ազգային հաստատութեանց շատ թանկագին գանձին կը վերաբերի: Ուսումնասիրեցէ՛ք պարոններ՝ սփիւռք ունեցող աշխարհիս ժողովուրդները - իրլանտացի, յոյն, լեհացի, պասք թէ ասորի: Բացի ... հրեաներէն, անոնց ոչ մէկը՝ հնչիւն ոսկիներով կը հաշուէ իր ազգային գանձը, այլ իրենց ամենադժուարներով, երգերով, պարերով, արուեստներով, գրականութեամբ, աշխարհին տուած իրենց արժէքաւոր անձերով ու մա՛նաւանդ՝ հաստատութիւններով:

Որպէս ընկերային աշխարհագրութեան ուսանող՝ առիթը ունեցեր եմ ուսումնասիրելու քաղաքներու մէջ շինարար դեր խաղացող կարելոր հաստատութիւնները: Ամենէն դիւրին հաստատուեր են քաղաքական, մշակութային, մարմնամարզական, առեւտրական ու ընկերային նպատակներ հետապնդող հաստատութիւնները, բայց ամենէն մեծ ջանք պահանջեր են՝ բարերար մարդոց հիմնած հաստատութիւնները - եթէ իրենց ամբողջ կեանք մը տեւած աշխատանքը նկատի առնուի:

Այդպիսի հաստատութիւն մըն է ՄԿՀ-ը: Երկու աշխատասէր եղբայրներ, Եգիպտոսի մէջ երկար տարիներ տօնելէ վերջ՝ իրենց ամբողջ կեանքի խնայողութիւնները հաւաքեր ու Եղեռնէն մի քանի տարի վերջ՝ հաստատեր են բազմապիտանի (մըլդիոբըրբոսէշ *բոլեալանդէ*) երկու շէնք, որպէսզի

Որպես Ցեղասպանությունները ճշգրիտ որոշելու և պատժելու համար՝ մտաւորական նոր սերունդներ կրթեն՝ մանկապարտեզէն մինչև երկրորդական վարժարան եւ օր մը՝ համալսարան:

Կը յիշեմ, ՄԿՀ ընդունուելու քննութիւններս՝ կեանքիս ամենէն դժուարն էին - որովհետեւ Բարերար եղբայրները, կտակած էին որ մե՛ծ ուշադրութեամբ զատուէին թեկնածուները: Անոնք մասնաւորաբար պատուիրած էին ուսումնասէր հայորդիներ զատել՝ այդ հաստատութեան մէջ ծրի կրթուելու - ոչ թէ պարզապէս ունեւոր ընտանիքի զաւակներ, որոնց ծնողքը պիտի կարենար թեկնածուին թոշակը դիւրաւ վճարել: Հունձքէ-հունձք, այդ ճրի ուսանած շրջանաւարտները՝ դարձան ուսուցիչ, դարձան խմբագիր, դարձան գրող, գիտնական ու արուեստագէտ: Անոնց ազգին բերած օգուտը՝ իրենց այսօր շահած տոլարներով հաշուելը՝ անտեղի եւ բոլորովին ծիծաղելի պիտի ըլլար: Եթէ անոնց աշխարհի բերած հայախօս զաւակներով հաշուէինք՝ շատ աւելի ճշգրիտ պիտի ըլլար անոնց հայ ազգին բերած գանձը: Բայց կարգ մը ՄԿՀ-եան փակման որոշման կողմնակիցներ, Ամերիկեան բարձր համալրարաններ յաճախող իրենց զաւակներով կը հաշուեն այդ գանձը ... Ափսո՛ս: Անոնցմէ մին՝ գիտեմ թէ Մելգոնեանի հին շրջանաւարտ է ... Հազա՛ր ափսոս:

ՀԲԸՄը, որպէս Ամերիկեան արդիական կազմակերպութիւն, շատ ապիկար կերպով յանգեցաւ ՄԿՀ-ը փակելու որոշման: Անտեսելով հայ ժողովրդի իրաւունքը՝ որպէս Մելգոնեան Բարերարներու Կտակէն օգտուող օրինաւոր կողմ (սոփաքէհոլտեր) գոց դռներու ետեւ, բոլորովին նիւթական հիման վրայ, տարիներ խղճահարուելէ ետք՝ որոշեց փակել ՄԿՀ-ը: Բայց այժմ հետեւեցէք այդ որոշումը ժողովրդին տեղեկացնելու իր շա՛տ «արդիական» գործելա- կերպին: Կիպրոս ուղղարկեց կալուած գնահատող մասնագէտ մը որ ... կծծիաբար փոխանակ պանդոկ գիշերելու, ՄԿՀ-եան մէջ մնալով՝ անզգա- լաբար ՀԲԸՄի գաղտնիքը արձակեց: ՀԲԸՄ անմիջապէս ժխտեց լուրը, մեծայարգ Նախագահ Պերճ Սեդրակեան՝ բացէ ի բաց ստելով Գալիֆորնիոյ Սանուց Նախագահ՝ Կարօ Գասապեանին: Նախ ե-նամակով ղրկուեցաւ ՄԿՀ-եան յաջողութիւնները թուող գրութիւն մը, ապա անոր ներկայ տկարութիւնները թուող ուրիշ գրութիւն մը: Յաջորդեց անոր «այլեւս ժամանակավրէպ» ըլլալու կարծիքը՝ նշելով Լոս Անճըլէսի շատ աւելի աշակերտներ ունեցող հայկական դպրոցներ ու փաստարկելով ՄԿՀ- եան տարուէ- տարի պակասող ուսանողներու թիւը: Սակայն տարուէ-տարի բարձրացնելով թոշակաւոր ուսանողներու թիւը եւ իջեցնելով մուտքի քննութեանց մակարդակը՝ մոռցուած էր ՄԿՀ-եան ազգին առաջնորդներ պատրաստելու առաքելութիւնը: Միայն վարժարանի գոյատեւման նիւթական պայմանները նկատի կ'առնէր այլեւս ՀԲԸՄ ու ՄԿՀ-ը փակելու որոշումը անխուսափելի էր այլեւս: Գործելակերպի վերջին փուլը՝ կը կոչուի «մեր համբաւը փրկենք» (տամակէ գոնդրով) եւ անոր վարպետն է ... ԱՄՆ-ու Նախագահ Պուշ:

Փոխան այսպիսի ապիկար մեքենայություններու, մեր ազգային ճակատագրին հետ կապ ունեցող որոշում մը՝ հարկ է աւելի լայն ժողովրդական շրջանակի մը մասնակցութեամբ առնել – օր. ՀԲԸՄի քուրք անդամներուն քուէյով – որովհետեւ յաջորդ թելադրութիւնս իսկապէս ամբողջ անդամակցութեան հաւանութեան կը կարօտի:

1926-էն գոնէ մինչեւ 1976, երբ Բարերարներուն կտակած դրամագլուխը ՀԲԸՄին ձեռքը լաւ տարեկան եկամուտ մը կը հասցներ, երբէկ հաշուեյարդար մը չհրատարակեց Միութիւնը: Հաւատարիմ մնալով ազգին առաջնորդներ հայթայթելու առաքելութեան՝ ՀԲԸՄի համայն անդամակցութիւնը որոշէր տարին մի՛այն ՅՕ, լաւ քննուած, իսկապէս ուսումնասէր եւ իրենց համայնքին, կամ Հայաստանի, կամ Արցախի մէջ կամաւորաբար ծառայած թեկնածուներ ձրիաբար, կամ փոքրիկ վճատումով ընդունիլ, ՄԿՀ-եան գոյատեւումը պիտի չապահովուէր: Որպէս Բարեգործականի անդամներ, անոնք դիրաւ պիտի կարենային ծախսը իրենց անդամակցութեան սակով գոցել – այս անգամ որպէս Բարերարներէն կտակուած պարտականութիւն:

Արդ, կոչ կ'ուղղեմ Ձեզ ՀԲԸՄ-ի Կեդրոնական Յանձնախումբի անդամներ, ՄԿՀ-եան առաքելութիւնը «այլեւս անտեղի կամ անարժէք» յայտարարելէ առաջ՝ կարդացէ՛ք ու նորէ՛ն կարդացէ՛ք Կտակը: Բարերարներու Կտակը սուրբ խօսք կը պարտինք նկատել, իսկ անոնց զատած վարժարանի դիրքը՝ նուիրական: Հէթում Բի հիմնած Մակարայ վանքը՝ ժամանակավրէպ էր 15րդ դարէն ետք, բայց Կիպրահայութեան տարեկան ուխտի վայր մնաց ան, մինչեւ 1974-ի թրքական ապօրինի յարձակումը:

Բայց ո՞վ կը համարձակի Մելգոնեանի դիրքը անտեղի ու ժամանակավրէպ նկատել այսօր, երբ Կիպրոս՝ Եւրոպայի Միութեան անդամ դարձեր է – այն Միութեան որ ճանչցեր է Յեղասպանութիւնը եւ բարձրագոյն հաւանականութիւնը ունի՝ Ոճրագործն անգամ համոզելու այդ ուղղութեամբ՝ նոյնիքն ՄԿՀ-եան հիմնաւորման պատմութիւնը որպէս փաստ բերելով: Գալով Հայութեան՝ Սփիւքի մեր բեկորներու որպէս Հայ գոյատեւելու յարմարագոյն մարզը՝ տա՛կաւին Միջին Արեւելքն է – Կիպրոս, Լիբանան, Սուրիա, Իրան, Իրաք, Արաբիա, Յորդանան, Յունաստան, Պուկարիա, Սերպիա, նոյնիսկ Թուրքիա եւ ...Ալպանիա – ոչ թէ Լոս Անճըլէս կամ Պոսթըրն, ոչ իսկ Մոնթրէալ կամ Թորոնթօ: Հայ շինելու լաւագոյն «գործարանը»՝ ճիշտ է որ Հայաստանն է, բայց չմոռնանք, Հայ ժողովուրդ, թէ Արեւմտահայ լեզուին, Մեսրոպեան ուղղագրութեան եւ մանաւանդ Թրքահայաստանի պահանջատէր հայութեան գոյատեւումը Միջին Արեւելքի մէջ՝ մեր Դատի հիմնաքարն է: Անկարելի պիտի ըլլար Սերի Հայաստանը կամ գոնէ մաս մը պահանջել ապագային՝ երբ ՄԿՀ-եան փակումով՝ աւելի արագօրէն ձուլուեր Միջին Արեւելքի Հայութիւնը: Արդ՝ նոյնիսկ Հայաստան փոխադրելով ՄԿՀ-ը՝ Բարերարներուն Կտակը դրժած պիտի ըլլայ ՀԲԸՄ: Թրքասէր ԱՄՆ-ու որեւէ դատարան, պիտի մերժէր ընդունիլ հայանպաստ այս «երազային» պատճառաբանութիւնը եւ պիտի ընդունէր Մեթր Սեդրակեանի «օրինաւոր» պատճառները՝ ՄԿՀ-ը փակելու: Բայց ամէն հայ, վստահ եմ, իր սրտին խորը՝ պիտի լիովի հասկնար վերի տողերս:

ԿԱՐՊԻՍ ԱՐՄԷՆ
ԸՆԿԵՐԱՅԻՆ աշխարհագրության դոկդոր

Օթթաուա
Ոգոստոս 2004